ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հունվարի 2015թ. թիվ 1 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Իրավական ակտերի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով՝

ո ր ո շ ո ւ մ ե մ.

1.Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2005 թվականի ապրիլի 20-ի <Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանում քաղաքացիների ընդունելության կարգը հաստատելու մասին> թիվ 28-Ա որոշման պահանջներին համապատասխան հաստատել 2015 թվականի ՀՀ Տավուշի մարզպետի կողմից քաղաքացիների ընդունելության ժամանակացույցը /հավելված 1/:

2.Մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարներին. քաղաքացիների ընդունելության ժամանակ առաջնորդվել ՀՀ Տավուշի մարզպետի 2005 թվականի ապրիլի 20-ի թիվ 28-Ա որոշման պահանջներով:

3.Սույն որոշմամբ հաստատված ժամանակացույցին համապատասխան քաղաքացիների ընդունելության կազմակերպման պատասխանատվությունը դնել մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության վրա:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ.ԱԲՈՎՅԱՆ

12 հունվարի 2015թ.
ք.Իջևան

Հավելված 1
Հաստատված է ՀՀ Տավուշի
մարզպետի 2015թ. հունվարի 12-ի
N 1 -Ա որոշմամբ

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

2015 թ. ՀՀ Տավուշի մարզպետի կողմից քաղաքացիների ընդունելության

Տարածքներ	Հունվար	Փետր-վար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոս-տոս	Սեպտեմ-բեր	Հոկտեմ-բեր	Նոյեմ-բեր	Դեկտեմ-բեր
ԻՋԵՎԱՆ	22.01.	12.02.	12.03.	09.04.	14.05.	11.06.	09.07.	13.08.	10.09.	08.10.	12.11.	10.12.
Բերդ	29.01.	---	---	16.04.	---	---	16.07.	---	---	15.10.	---	---
Նոյեմբերյան	---	19.02.	---	---	21.05	---	---	20.08.	---	---	19.11.	---
Դիլիջան	---	---	19.03.	---	---	18.06.	---	---	17.09.	---	---	17.12.

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.ԴԱՎԹՅԱՆ